

**ՆԱԽՆԱԿԱՆ ՉԻՆԿՈՐԱԿԱՆ ԴԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ - 2020-2021 ՈՒՍԱՐԻ**

10 - ԲԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **120** րոպե:

Գնահատումը կատարվում է **20** միավորանոց համակարգով:

Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:

Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Ֆիդայական շարժումը սկզբնավորվել է՝

ա. XVI դարի վերջերին, Արևմտյան Հայաստանում:

գ. XVII դարի վերջերին, Արևմտյան Հայաստանում:

բ. XIX դարի վերջերին, Արևմտյան Հայաստանում:

դ. XX դարի վերջերին, Արևմտյան Հայաստանում:

2. 1917 թվականի նոյեմբերին ձևավորվց հայկական կորպուսը: Կորպուսի հրամանատար նշանակվեց՝

ա. Դրաստամատ Կանայանը

գ. Գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը

բ. Գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը

դ. Գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանը

3. Ե՞րբ է տեղի ունեցել Խանասորի ճակատամարտը

ա. 1905թ. գարնանը

գ. 1918թ. մայիսին

բ. 1897թ. ամռանը

դ. 1937թ. փետրվարին

4. Ո՞վ չի եղել Հայաստանի Առաջին Հանրապետության զինվորական նախարար

ա. Դրաստամատ Կանայան

գ. Հովհաննես Հախվերդյան

բ. Հովհաննես Զաջազունի

դ. Զրիստափոր Արարատյան

5. Ըստ գործողության բնույթի ինժեներական արգելափակոցները լինում են՝

ա. վտանգավոր, քիչ վտանգավոր և խիստ վտանգավոր

գ. ականապայթուցիկ, պայթուցիկ և համակցված

բ. ականապայթուցիկ, ոչ պայթուցիկ և համակցված

դ. վնասազերծվող, ոչ վնասազերծվող և համակցված

6. Տեղագրական քարտեզ՝

ա. Երկրագնդի մակերեսի, նրա վրա գտնվող բոլոր օբյեկտների փոքրացրած, ճշգրիտ, մանրամասն պատկերումն է թղթի վրա:

բ. Երկրագնդի մակերեսի փոքրացրած, ճշգրիտ և մանրամասն պատկերումն է թղթի վրա:

գ. Տեղանքի մանրամասն պատկերումն է թղթի վրա:

դ. Տեղանքի և նրա վրա գտնվող բոլոր օբյեկտների փոքրացրած, ճշգրիտ, մանրամասն պատկերումն է թղթի վրա:

7. Տեղագրական կողմնորոշումը՝

ա. ներառում է տեղանքի կողմերի և սեփական դիրքի որոշումը առանձին երևացող առարկաների (կողմնորոշիչների) նկատմամբ:

բ. ներառում է հորիզոնի կողմերի և սեփական դիրքի որոշումը առանձին լավ երևացող առարկաների (կողմնորոշիչների) նկատմամբ:

գ. ներառում է հյուսիսային ուղղությամբ և հորիզոնի գծի նկատմամբ և սեփական դիրքի որոշումը:

դ. ներառում է հորիզոնի կողմերի և սեփական դիրքի որոշումը առանձին վատ երևացող առարկաների (կողմնորոշիչների) նկատմամբ:

8. Չնդակի հետագիծը

ա. այն կոր գիծն է, որն արտագծում է փամփուշտը օդում թռիչքի ժամանակ:

բ. Այն կոր գիծն է, որն արտագծում է զնդակի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ:

գ. Այն կոր գիծն է, որն արտագծում է պարկուճի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ:

դ. Այն կոր գիծն է, որն արտագծում է զնդակը օդում:

9. Կրակոցը

ա. զենքի փողին անհրաժեշտ ուղղություն տալն է,

բ. զնդակի դուրսնետումն է փողանցքից վառոդային գազերի ներգործության տակ,

գ. զնդակի շարժումն է փողի մեջ և փողից դուրս,

դ. զնդակի դուրսնետումը փողանցքից:

10. Նշան բռնել (նշանառում) նշանակում է

ա. փողը ուղղել դեպի թիրախը:

բ. Հավասար նշանահատիկ վերցնել և համատեղել նշանառման կետի հետ:

գ. Աչքը համատեղել նշանահատիկի և թիրախի գծի հետ:

դ. Նշանահատիկը համատեղել նշանառման կետի հետ:

11. Հրետանավորը պայթյունը լսել է բռնկումից 15 վայրկյան հետո: Հեռավորությունը մինչև հարվածի տեղը հավասար կլինի՝

ա. 25 կմ

բ. 15 կմ

գ. 5 կմ

դ. 10 կմ

12. Միջին հասակի մարդու չափերը քանոնով չափելիս ստացվել է 2 մմ: Որքա՞ն է Ձեր կանգնած կետից մինչ տվյալ մարդը եղած հեռավորությունը:

ա. 430 մ.

բ. 500 մ.

գ. 425 մ.

դ. 340 մ.

13. Հորիզոնում գտնվող տանկի հետ կլոր մատիտը համեմատելիս այն ամբողջությամբ ծածկում է տանկը: Որքա՞ն է կազմում դիտակետից մինչ տանկը եղած հեռավորությունը:

ա. 250 մ.

բ. 200 մ.

գ. 320 մ.

դ. 340 մ.

14. Ի՞նչ նպատակով են տեղադրվում ինժեներական արգելափակոցները:

ա. Հակառակորդի առաջխաղացումը խթանելու, տեղաշարժը դժվարացնելու, զենքի բոլոր տեսակներից հակառակորդին հարվածներ հասցնելու առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

բ. Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու, տեղաշարժը դժվարացնելու, զենքի բոլոր տեսակներից հակառակորդին հարվածներ հասցնելու առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

գ. Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու, տեղաշարժը դժվարացնելու, զենքի բոլոր տեսակներից հակառակորդին հարվածներ հասցնելու առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

դ. Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու, տեղաշարժը դժվարացնելու, զենքի բոլոր տեսակներից հակառակորդին հեռահար հարվածներ հասցնելու համար:

15. Որքա՞ն է ԿԱ-74 ինքնաձիգի զնդակի թռիչքի առավելագույն հեռավորությունը՝

ա. 3250 մ.

բ. 3000 մ.

գ. 3150 մ.

դ. 2150 մ.

16. Կրակոց Է կոչվում՝

ա. գնդակի դուրս գալը փողանցքից

բ. գնդակի արտանետումը խողովակից վառողային գազերի ներգործության տակ

գ. գնդակի դուրսնետումը փողանցքից շմուլ գազի ներգործության տակ

դ. գնդակի դուրսնետումը փողանցքից վառողային գազերի ներգործության տակ

17. Ուղիղ կրակոց կոչվում է այն կրակոցը,

ա. որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը չի փոխում իր ուղղությունը,

բ. որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը իր ողջ երկարությամբ չի բարձրանում նշանառման գծից վեր, նշանակետից բարձր,

գ. որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը իր ողջ երկարությամբ բարձրանում է նշանառման գծից վեր, նշանակետից բարձր,

դ. որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը փոխում է իր ուղղությունը:

18. Կոման

ա. ուղեղի կեղևի ախտահարումն է՝ պայմանավորված արտահայտված թթվածնային քաղցով:

բ. Ուղեղի ախտահարումն է՝ պայմանավորված արտահայտված թթվածնային քաղցով:

գ. Ուշագնացությունն է:

դ. մարդու այնպիսի վիճակ է, որի դեպքում չի կարողանում արձագանքել շարժապատող միջավայրի ազդակներին:

19. Պայթյունը

ա. փոքր քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում:

բ. մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է որոշակի ծավալում կարճատև ժամանակահատվածում:

գ. մեծ քանակությամբ էներգիայի տարածումն է սահմանափակ ծավալում կարճատև ժամանակահատվածում:

դ. մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում կարճատև ժամանակահատվածում:

20. Հրդեհը

ա. այրման վերահսկելի գործընթաց է, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացմամբ և վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար:

բ. այրման անվերահսկելի գործընթաց է, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացմամբ և վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքին և առողջությանը:

գ. այրման լայնածավալ գործընթաց է, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացմամբ և վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար:

դ. այրման այնպիսի գործընթաց է, որն ուղեկցվում է նյութական արժեքների ոչնչացմամբ և վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար:

Ուշադրություն: Ճիշտ պատասխանները նշված են դեղին գույնով: